

Եւ մինչ զայս այսպէս տեսաք՝ ի հօդի բեր-
կրեցաք եւ արտասուախառն երկիւղիւ լցաք եւ
բարձեալ զկական միաբանութեամբ հանդերձ ի
վերայ երեսաց մերոց անկաք. ընդ նմին եւ զՏէր
աղաչեցաք հասանել ի թիկունս տկարութեան
մերում:

Եւ զկնի իբրեւ հասաք ի տեղին Իննսկեսնի՝
լցաք անպատմելի խնդութեամբ. որ եւ զՏէր օրհ-
նեցաք յաղթողական օրհնութեամբ, որ եղեւ մեր
յոյս: Իսկ զկրեւոց մերոց զեղանակ եւ զչափ՝ դիտէ
Տէր անթերի եւ ծառայն իւր ազնիւ Կարապետն
Սուրբ, որոյ բարեխօսութեամբն փրկեաց զմեզ յա-
մենայնէ եւ փրկեսցէ:

Այլ արդ՝ թէպէտ տեղւոյն վայելութիւնք
գեղեցիկք գոլով յոյժ՝ եթէ սրբոց շնորհաբաշխ
եւ լուսակազմ շիրմիւքն, քրօբէաճեմ, ահրնկեց

դականն արգարութեան, սկսան երգել. որ խորապէս կ'ազդէ
տեղւոյն վրայ: — Ընչուշտ շատ յուզուած եւ ազգուած էին
երկու վարդապետները թէ շարականէ, եւ թէ այդ հիանալի
առաւօտէն, որ իր արշալոյսի թեւերուն տակ բոսոր բոսոր
կը վառէր Իննսկեսնի վանքը՝ արանելագեղ, լուսաճաճանչ,
ահեղահրաշ, տեսարանով մը, այնպէս որ հրաշալի իրողու-
թեան մը կամ տեսիլի մը տպաւորութեամբ կը համակուին
ահուգողի, նոյն իսկ արցունքի մէջ: Ուրիշ կերպով կարելի
չէ մէկնել զոլորտի նկարագրած երեւոյթը:

1 Իննսկեսն կը նշանակէ ինը հիւր, ագիւ-բնիւր: Ս.
Կարապետի վանքին հիւսիսային կողմը 15—20 վայրկեան
հեռի: Քարբէի ստորոտը, շատ մը կենդանի աղբիւրներ,
որոնց գլխաւորները ինը հատ եղած են սկզբան: Ըյն աղ-
բիւրները միացուած են խելացի կարգադրութեամբ մը եւ
միացած ջուրերը կը կազմեն հիանալի առու մը, վճիտ ա-
գամանդի պէս, սառնորակ, որ օձապտոյտ ընթացքով մը
հարաւային սարերու քղանցքը կը քերէ եւ իր ընթացքին
կէսէն ետքը Բարեհամ աղբիւրէն ալ օժանդակուելով, կը
մտնէ Ս. Կարապետ եւ վանքի դաւթին մէջ եւ հոն ջա-
ղացքը դարձնելով գուրս կը թափի արեւելեան պատին
տակէն, դէպի Փակահ) = Ագարակատուն, Զիֆթիկի):